«ՎԻԼԿՈ» ՍՊԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄ		01.07.26-30.09.26	01.01.26-30.09.26	01.07.25-30.09.25	01.01.25-30.09.25
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	99,550	306,361	28,297	41,821
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(34,663)	(100,364)	(9,483)	(23,804)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**64,887**	**205,997**	**18,814**	**18,017**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	85,726	184,702	28,417	63,096
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(38,849)	(139,288)	(7,135)	(7,675)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**46,877**	**45,414**	**21,282**	**55,421**
Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից	6	103,466	216,027	(10,917)	(12,674)
Այլ գործառնական եկամուտներ	7	2,878	29,326	16,066	43,429
Գործառնական եկամուտներ		**218,107**	**496,763**	**45,245**	**104,194**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	8	(1,169)	(2,414)	-	-
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(817,654)	(1,936,603)	(550,650)	(1,076,748)
Այլ գործառնական ծախսեր	10	(425,130)	(835,310)	(69,081)	(162,874)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		**(1,025,846)**	**(2,277,564)**	**(574,486)**	**(1,135,429)**
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	11	1,505	3,248	-	-
Ժամանակաշրջանի վնաս		**(1,024,341)**	**(2,274,316)**	**(574,486)**	**(1,135,429)**
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմասը		-	-	-	-
Չվերահսկվող բաժնեմասը		-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ		(1,173)	(1,173)	5,424	5,424
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ		211	211	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքը հարկումից հետո		**(962)**	**(962)**	**5,424**	**5,424**
Համապարփակ ֆինանսական արդյունք		**(1,025,303)**	**(2,275,277)**	**(569,062)**	**(1,130,005)**

Գործադիր տնօրեն
Իրինա Բելիշեվա

15 Հոկտեմբեր 2026

Ֆինանսական տնօրեն
Քրիստինա Քարամյան

			Հազար ՀՀ դրամ
ԱՆՎԱՆՈՒՄ		**առ 30.09.2026**	**առ 31.12.2025**
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	431,571	201,872
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	14	154,800	163,800
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	15	633,697	717,929
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	16	3,798,120	2,711,532
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում		-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	1,167,960	1,057,236
Հետաձգված հարկային ակտիվներ	11	7,525	4,066
Այլ ակտիվներ	18	92,495	181,006
Ընդամենը՝ ակտիվներ		***6,286,168***	***5,037,441***
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	2,079,468	1,968,679
Այլ պարտավորություններ	21	454,198	374,734
Ընդամենը՝ պարտավորություններ		***2,533,666***	***2,343,413***
Սեփական կապիտալ	**25**		
Կանոնադրական կապիտալ		5,037,864	3,665,804
Էմիսիոն եկամուտ		-	-
Պահուստ՝			
Գլխավոր պահուստ		37,500	37,500
Վերագնահատման պահուստներ		22,608	23,570
Չբաշխված շահույթ (վնաս)		(2,274,315)	(1,961,690)
Սեփական կապիտալի այլ տարրեր		928,844	928,844
Ընդամենը՝ սեփական կապիտալ		***3,752,502***	***2,694,028***
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		***6,286,168***	***5,037,441***

Գործադիր տնօրեն
Իրինա Բելիշեվա

15 Հոկտեմբեր 2026

Ֆինանսական տնօրեն
Քրիստինա Քարամյան

Հազար ՀՀ դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ		Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	Չբաշխված շահույթ/վնաս	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը	Ընդամենը կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Ջուտ գումարը						
Հոդվածներ	**1**	**3**	**5**	**7**	**10**	**12**	**13**	**15**
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)								
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2025թ.	**350,000**	**350,000**	**37,500**	**-**	**84,631**	**-**	**472,131**	**472,131**
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	350,000	350,000	37,500	-	84,631	-	472,131	472,131
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	3,315,804	3,315,804	-	-	-	-	3,315,804	3,315,804
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	3,315,804	3,315,804	-	-	-	-	3,315,804	3,315,804
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-
5. Համապարփակ եկամուտ	-	-	-	5,424	(1,135,429)	-	(1,130,005)	(1,130,005)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-
6.1. Կապակցված կողմերին տրամադրված անտոկոս փոխառության ազդեցություն	-	-	-	-	-	-	-	-
7. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2025թ. (ստուգված/չստուգված)	**3,665,804**	**3,665,804**	**37,500**	**5,424**	**(1,050,798)**	**-**	**2,657,930**	**2,657,930**

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)

8. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2026թ.	**3,665,804**	**3,665,804**	**37,500**	**23,570**	**(1,961,690)**	**928,844**	**2,694,028**	**2,694,028**
8..1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-
9. Վերահաշվարկված մնացորդը	3,665,804	3,665,804	37,500	23,570	(1,961,690)	928,844	2,694,028	2,694,028
9.1. Կանոնադրական կապիտալի նվազեցում՝ կուտակված վնասի ծածկման նպատակով	(1,961,690)	(1,961,690)	-	-	1,961,690	-	-	-
10. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	3,333,750	3,333,750	-	-	-	-	3,333,750	3,333,750
10.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	3,333,750	3,333,750	-	-	-	-	3,333,750	3,333,750
10.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-
11. Համապարփակ եկամուտ				(962)	(2,274,316)	-	(2,275,278)	(2,275,278)
12. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30 սեպտեմբերի 2026թ. (ստուգված/չստուգված)	**5,037,864**	**5,037,864**	**37,500**	**22,608**	**(2,274,316)**	**928,844**	**3,752,502**	**3,752,502**

Գործադիր տնօրեն
Իրինա Բելիշևա

15 Հոկտեմբեր 2026

Ֆինանսական տնօրեն
Քրիստինա Քարամյան

		Հազար ՀՀ դրամ
ԱՆՎԱՆՈՒՄ	**01.01.26- 30.09.26**	**01.01.25- 30.09.25**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ	191,833	23,101
Վճարված տոկոսներ	(97,689)	-
Ստացված կոմիսիոն գումարներ	19,119	63,642
Վճարված կոմիսիոն գումարներ	(12,784)	(1,456)
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից վնաս	-	-
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ	-	-
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(920,350)	(402,596)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(1,317,173)	(653,366)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	***(2,137,044)***	***(970,675)***
Փոխատվությունների նվազում (ավելացում)	-	298,000
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	84,232	(699,671)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարում	***(2,052,812)***	***(1,372,346)***
Վճարված շահութահարկ	-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	***(2,052,812)***	***(1,372,346)***
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)	(1,086,588)	(1,583,769)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,485)	(493,653)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	5,130
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	-	(747)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	***(1,110,073)***	***(2,073,039)***
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Ստացված վարկերի և փոխառությունների ավելացում (նվազում)	111,356	825,000
Մասնակիցների ներդրումները կանոնադրական կապիտալում	3,333,750	3,315,804
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի վճարում	(60,417)	(74,722)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	***3,384,689***	***4,066,082***
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	7,894	(2,450)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	***229,699***	***618,247***
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	201,872	50,071
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	***431,571***	***668,318***

Գործադիր տնօրեն
Իրինա Բելիշևա

15 Հոկտեմբեր 2026

Ֆինանսական տնօրեն
Քրիստինա Քարամյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

1) Իրավական դաշտ

ա) Ներդրումային ընկերության հիմնական գործունեությունը

«Վիլկո» ՍՊԸ-ն շահույթ ստանալու նպատակով ներդրումային գործունեություն իրականացնող իրավաբանական անձ է: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունիսի 27-ի թիվ ԾՕՀ Ա որոշման Ընկերության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում՝ գրանցման վկայական թիվ 8, գրանցման աննսաթիվ՝ 27.06.2008թ.:

Ընկերության ֆիրմային անվանումն է «Վիլկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ):

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Սարյան 26/2 շենք:

Ընկերության կառավարման մարմիններն են մասնակիցների ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը: Ընկերության ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է ընկերության միակ մասնակիցը, որն իր իրավասությունների սահմաններում ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը: Ընկերության Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում գործունեության ղեկավարման հարցերը, որոնք Կանոնադրությամբ և Օրենսդրությամբ վերապահված չեն ընդհանուր ժողովի իրավասությանը:

«Վիլկո» ՍՊԸ-ն 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի մեկ մասնակից «Պարադեպլատց Լիմիթեդ» ընկերությունը: ՀՀ կենտրոնական բանկի կողմից 22.04.2025թ-ին գրանցվել է այլ կազմակերպության կողմից ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս ուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերումը:

Այնուհետև, ՀՀ Կենտրոնական բանկի 2025 թվականի հուլիսի 2-ի թիվ 1/225Ա որոշմամբ հաստատվել են Ընկերության գրանցման տվյալներում կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում են Ընկերության մասնակցի, կանոնադրական կապիտալի ինչպես նաև ֆիրմայի անվան փոփոխությանը՝ Ալֆասեքյուրիթիզ ՍՊԸ-ից Վիլկո ՍՊԸ :

բ) Գործարար միջավայրը

«Վիլկո» ՍՊԸ-ն հանդիսանում է ներդրումային ընկերություն, որի հիմնական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պարտատոմսերի շուկայում: Ընկերության գործառնությունների հիմնական ուղղություններն են ներդրումային գործունեության

իրականացումը, ինչպես նաև դիլերային և բրոքերային ծառայությունների մատուցումը՝ գործող օրենսդրության և կարգավորիչ պահանջների շրջանակներում:

Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի հանրապետությունում, հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերության գործունեությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (այսուհետ՝ ՀՀ ԿԲ): Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է գլխամասային գրասենյակի միջոցով, որի հասցեն է ՀՀ, ք. Երևան, Սարյան 26/2: Նշված հասցեն Ընկերության իրավաբանական հասցեն է: Ընկերությունը ստեղծվել է 2008թ-ին, իսկ 09.04.2024թ-ին վերագրանցվել: Ընկերության գրանցման համարը և լիցենզիայի համարն է 8:

Ընկերությունը գործում է ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցների հետ ձևավորված գործարար միջավայրում, համագործակցելով ՀՀ Կենտրոնական բանկի հետ՝ որպես կարգավորիչ և վերահսկող մարմին, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի, ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ: Նշված միջավայրը էական դեր է խաղում Ընկերության գործառնական գործունեության, ֆինանսական արդյունքների և շուկայական դիրքավորման ձևավորման գործընթացում:

Ընկերության ակտիվների զգալի մասը տեղակայված է ՀՀ-ում: Հետևաբար, Ընկերության գործունեության, ֆինանսական արդյունքների և ակտիվների արժեքի վրա էական ազդեցություն են ունենում ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը և ֆինանսական շուկաները, որոնք բնութագրվում են զարգացող շուկաներին հատուկ առանձնահատկություններով: Տնտեսական, քաղաքական և կարգավորիչ միջավայրի փոփոխությունները նույնպես կարող են ունենալ անմիջական կամ անուղղակի ազդեցություն ներդրումային և ակտիվների կառավարման ընկերությունների գործունեության վրա:

2) Կորպորատիվ կառավարում

ա) Խորհրդի կառուցվածքը, կազմը

Ընկերությունը խորհուրդ չունի: Ընկերության կառավարման մարմիններ են մասնակիցների ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը: Ընկերության ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է ընկերության միակ մասնակիցը, որն իր իրավասությունների սահմաններում ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

բ) Տնօրինության կառուցվածքը, կազմը

Ընկերության ղեկավարության մարմիններն են մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Իրինա Բելիշեվան: Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

գ) Սեփականության կառուցվածքը, բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում

30.09.2026թ-ի դրությամբ Ընկերությունը ունի մեկ բաժնետեր:

Ընկերությունն ունի մեկ բաժնետեր, որը ներկայացված է ստորև.

Բաժնետեր	Ունեցած մասնակցության չափը	Մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ
«Պարադեպլատց Լիմիթեդ» ՍՊԸ	5,037,864,000	100%

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2026թ. հոկտեմբերի 15-ին:

դ) Նշանակալից մասնակիցների անունները/անվանումները

Ընկերության նշանակալից մասնակիցն է «Պարադեպլատց Լիմիթեդ» ՍՊԸ-ն:

ե) Ղեկավարների վարձատրության քաղաքականությունը

Ղեկավարների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

զ) Արտաքին աուդիտին վճարները

Արտաքին աուդիտին վճարումը կատարվում է համաձայն վերջինիս հետ կնքված պայմանագրի: Վճարման չափը հաստատվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

1) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ,

բ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար,

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար,

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար,

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ընկերության 2026թ.-ի 3-րդ եռամսյակի Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները կազմելիս, բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության, իրականացնում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, ըստ որի գործառնությունները ճանաչվում են դրանց կատարման պահին և հաշվառման գրանցամատյաններում գրանցվում են ու ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում դրանց կատարման ժամանակաշրջանում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով: Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է ՀՀ դրամը, որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական և ներկայացման արժույթը, որով էլ ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության) պատրաստվում են՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը:

Ֆինանսական հաշվետվություններում համանման հոդվածների յուրաքանչյուր էական դաս ներկայացվում է առանձին: Տարբեր բնույթի և գործառույթի հոդվածները ներկայացվում են առանձին, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական չեն: Ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը պահանջվում կամ թույլատրվում է ՖՀՄՍ-ներով:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը (ներառյալ համադրելի տեղեկատվությունը) ներկայացվում է եռամսյակը մեկ անգամ:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի համադրելի տեղեկատվությունը, եթե ՖՀՄՍ-ներով չի պահանջվում կամ չի թույլատրվում այլ մոտեցում: Համադրելի տեղեկատվությունը ներառվում է նաև պատմողական և նկարագրական տեղեկատվության մեջ, երբ դա տեղին է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները հասկանալու համար:

Ֆինանսական հաշվետվություններում հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը փոփոխելու դեպքում վերադասակարգվում են նաև համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է: Համադրելի գումարները վերադասակարգելիս բացահայտման ենթակա են՝

ա) վերադասակարգման բնույթը

բ) վերադասակարգված յուրաքանչյուր հոդվածի կամ հոդվածների դասի գումարը

գ) վերադասակարգման պատճառը

Երբ համադրելի գումարների վերադասակարգումն անիրագործելի է, բացահայտվում է՝

ա) գումարները չվերադասակարգելու պատճառը.

բ) այն ճշգրտումների բնույթը, որոնք տեղի կունենային գումարների վերադասակարգումն իրականացնելու դեպքում:

Ֆինանսական հաշվետվություններում պահպանվում է հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) պարզ է, որ նշանակալի փոփոխություն է տեղի ունեցել գործառնությունների բնույթում, կամ

բ) ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ այլ ներկայացում կամ դասակարգում կլինի ավելի տեղին, կամ

գ) ներկայացման փոփոխությունը պահանջվում է ՖՀՄՍ-ներով:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ դրամով: Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները կլորացվում են հազարների ճշտությամբ:

2) Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Ընկերության կողմից ժամանակաշրջանի եկամտի և ծախսի բոլոր հոդվածները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ՖՀՄՍ այլ բան չի պահանջում կամ թույլատրում:

ա) Կոմիսիոն վճարների գծով եկամուտներ և ծախսեր

Ընկերությունը միջնորդավճարների տեսքով եկամուտ է ստանում իր հաճախորդներին մատուցվող ծառայությունների լայն շրջանակից, ինչպիսիք են բրոքերային և պահառուական ծառայությունները, արժեթղթերի հաշիվների բացումը և սպասարկումը, արժեթղթերի գրանցման և սպասարկման ծառայությունները և այլ նմանատիպ ծառայություններ:

Բրոքերային սպասարկման վճարները և պահառության վճարները հաշվարկվում են հաճախորդի անունից համապատասխան գործարքի կատարման պահին՝ պայմանագրով նախատեսված միջնորդավճարների դրույքաչափերը գործարքի ընդհանուր արժեքի վրա կիրառելու և հաշվարկային հանձնարարականների տրամադրման միջոցով:

Արժեթղթերի հաշվի վարման, արժեթղթերի գրանցման և սպասարկման ծառայությունների գծով վճարները գանձվում են մեկից երեք ամսվա ընթացքում:

Բոլոր դեբիտորական պարտքերը սովորաբար մարվում են համապատասխան ծառայության մատուցումից հետո մեկ ամսվա ընթացքում:

բ) Արժեթղթերով գործարքներ և համապատասխան ներդրումային եկամուտ

Դիլինգային գործունեությամբ պայմանավորված արժեթղթերով գործարքները հաշվառվում են վերջնահաշվարկի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտը ներառում է ողջ իրացված և չիրացված իրական արժեքի փոփոխությունները և արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, և, հնարավորության դեպքում, տոկոսային

շահաբաժիններից եկամուտը, որը ճանաչվում է, որբ հաստատվում է Ընկերության՝ վճարում ստանալու իրավունքը:

Բրոքերային գործունեությամբ պայմանավորված արժեթղթերով գործարքները չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները կրում են բրոքերային հաճախորդները:

3) Արտարժութային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային միավորները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2026թ. Սեպտեմբերի 30	**2025թ. Դեկտեմբերի 31**
ՀՀ դրամ / 1 ԱՄՆ դոլար	362.83	381.36
ՀՀ դրամ / 1 Եվրո	412.14	449.01
ՀՀ դրամ / 1 Ռուբլի	4.34	4.87

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով. և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ այն փոխարժեքային տարբերությունների, որոնք նշված են ՀՀՄՍ 21-ի 32-րդ պարագրաֆում:

Եթե ոչ դրամային հոդվածի գծով օգուտ կամ վնաս է ճանաչվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ապա այդ օգուտի կամ վնասի ցանկացած փոխանակման բաղադրիչ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Եվ հակառակը՝ եթե ոչ դրամային հոդվածի գծով

օգուտ կամ վնաս է ճանաչվում շահույթում կամ վնասում, ապա այդ օգուտի կամ վնասի ցանկացած փոխանակման բաղադրիչ ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4) Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկերը առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են:

5) Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով: Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

ա) Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես հետագայում ամորտիզացված արժեքով, այլ համապարփակ ֆինանսկաան արդյունքի միջոցով իրական արժեքով և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերությունը դուրս է գրում ֆինանսական ակտիվը, երբ առկա է տեղեկատվություն այն մասին, որ պարտապանը գտնվում է ծանր ֆինանսական վիճակում և գոյություն չունի վճարման պարտավորությունների կատարման իրատեսական հեռանկար, այսինքն, երբ պարտապանը սկսել է լուծարման կամ սնանկացման գործընթաց, կամ, առևտրային դեբիտորական պարտքերի դեպքում, երբ գումարը ժամկետանց է ավելի, քան երկու տարի, կախված այն բանից, թե ինչն է տեղի ունեցել ավելի շուտ: Դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթակա լինել հարկադիր գործողությունների՝ Ընկերության՝ գումարների հավաքագրման ընթացակարգերի շրջանակում՝ հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական խորհրդատվությունը: Ընկերության հարկադիր գործողությունների արդյունքում հավաքագրված գումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

6) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս)

Ընկերության համար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամը, ՀՀ Կենտրոնական բանկում և այլ բանկերում բացված հաշիվներում առկա գումարները, ֆինանսական գործարքներ կատարելու նպատակով այլ ֆինանսական կազմակերպություններում դեպոնացված գումարները, ինչպես նաև կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումները, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

7) Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե կազմակերպության բիզնես մոդելով նախատեսվում է այն պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և պայմանագրային դրամական հոսքերը համարվում են բացառապես մայր գումար և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվառվող տոկոսներ: Տոկոս է համարվում ժամանակի և պարտքային ռիսկի դիմաց հատուցումը, և մասնավորապես, եթե վճարման ուշացումը չի առաջացնում պայմանագրով նախատեսված լրացուցիչ հատուցում, ապա դա չի համարվում բացառապես տոկոսի և մայր գումարի վճարում:

Ընկերության՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են այլ ֆինանսական ակտիվներ և դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր ձեռքբերումները և վաճառքները ճանաչվում և ապաճանաչվում են են օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվով հաշվառումը: Կանոնավոր ձեռքբերումը և վաճառքը ֆինանսական ակտիվների այն ձեռքբերումները և վաճառքներն են, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը կանոնակարգման կամ շուկայի կողմից սահմանված ժամկետներում: Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև գնահատվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը պարտքային գործիքների համար, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

8) Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Մասնավորապես՝

– Պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում ամորտիզացված արժեքի չափանիշին կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման չափանիշին, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ինչպես նաև, պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են կամ ամորտիզացված արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կարող են դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ, եթե այսպիսի դասակարգումը վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, ինչը կառաջանար ակտիվների կամ պարտավորությունների չափումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվների կամ պարտավորությունների մասով օգուտի կամ վնասի ճանաչումից:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները սահմանվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում այն դեպքում,

երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին կամ ստացված տոկոս և ներառվում է «զուտ առևտրային օգուտ» հոդվածում:

9) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք սկզբնական ճանաչման պահին դասակարգվել են այս կատեգորիայում կամ որևէ այլ կատեգորիայի բնութագրերին չեն համապատասխանում: Դրանք ներառում են ձեռք բերված բաժնային և պարտքային արժեթղթեր, որոնք ձեռք են բերվել ոչ առևտրային նպատակով և ոչ մինչև մարման ժամկետը պահելու մտադրությամբ:

Այս ակտիվները չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից առաջացած չիրացված օգուտն ու վնասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում է սեփական կապիտալում՝ մինչև ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կուտակված գումարը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Տոկոսային եկամուտը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

10) Ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Ռեպո համաձայնագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրած փոխառությունների դիմաց ապահովություն: Ռեպո համաձայնագրերով տրված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ: Ռեպո համաձայնագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում: Ռեպո համաձայնագրերով ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում որպես ծախս:

Գործող պայմանագրերի շրջանակներում տոկոսների հաշվեգրումը դադարում է, երբ կա բավարար հիմք կարծելու, որ դրանք չեն հավաքագրվի:

11) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները (այդ թվում՝ ֆորվարդային և ֆյուչերսային պայմանագրեր, փոխանակման և օպցիոն գործարքներ) սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով, և հետագայում շարունակվում են վերաչափվել իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Իրական արժեքը որոշվում է շուկայում գործող գների կամ գնահատման մեթոդների հիման վրա, ներառյալ զեղչված դրամական հոսքերի մոդելները և օպցիոնների գնահատման մոդելները, կախված գործիքի բնույթից և շուկայում գնանշումների առկայությունից:

Բոլոր ածանցյալ գործիքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես ակտիվներ, երբ դրանց իրական արժեքը դրական է, և որպես պարտավորություններ, երբ իրական արժեքը բացասական է: Իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը ճանաչվում է անմիջապես շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ածանցյալ գործիքը նշանակվել և արդյունավետ է հանդիսանում որպես հեջավորման հարաբերությունների գործիք. այդ դեպքում կիրառվում է հեջ հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Ընկերությունը ածանցյալ ֆինանսական գործիքներ կարող է կիրառել շուկայական ռիսկերի (արտարժութային, տոկոսադրույքի կամ գնային) հեջավորման նպատակով, ինչպես նաև՝ առևտրային նպատակներով: Երկու ածանցյալ գործիք ինքնուրույն միմյանց հետ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի հաշվանցման օրինականորեն ամրագրված իրավունք և մտադրություն է հաշվարկը կատարել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել ակտիվը և մարել պարտավորություն::

12) Փոխառությունների ու դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի փոխառությունների ու դեբիտորական պարտքերի դուրսգրման հիմունքը

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է փոխառությունների և դեբիտորական պարտքերի արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայությունների առկայությունը՝ ինչպես անհատական հիմունքով, այնպես էլ խմբային հիմունքով այն ակտիվների համար, որոնք առանձին-առանձին էական չեն: Արժեզրկման օբյեկտիվ վկայություն է համարվում այն դեպքում, երբ սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել մեկ կամ մի քանի իրադարձություն, որոնք չափելի ազդեցություն ունեն ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա: Այդպիսի վկայություններ կարող են հանդիսանալ պարտապանի էական ֆինանսական դժվարությունը, մայր գումարի կամ տոկոսների վճարման ուշացումը կամ խախտումը, պարտապանի սնանկացման կամ ֆինանսական վերակազմավորման հավանականության աճը, ինչպես նաև ակտիվ շուկայի անհետացումը տվյալ ֆինանսական ակտիվի համար:

Խմբային հիմունքով գնահատվող փոխատվությունների համար Ընկերությունը կիրառում է պատմական կորստի վիճակագրության վրա հիմնված մոդելներ՝ ճշգրտված ընթացիկ դիտարկելի տվյալներով, որոնք արտացոլում են ընթացիկ տնտեսական պայմանների ազդեցությունը: Արժեզրկումից կորուստը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև եղած տարբերություն՝ զեղչված ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Փոխառությունը կամ դեբիտորական պարտքը (կամ դրա մի մասը) դուրս է գրվում այն դեպքում, երբ Ընկերությունը սպառել է հավաքագրման բոլոր ողջամիտ միջոցները և գնահատում է, որ գումարի հետագա հավաքագրման ակնկալիք գոյություն չունի՝ հաշվի առնելով պարտապանի ֆինանսական վիճակը, առկա գրավի իրացվելիությունը և արժեքը, ինչպես նաև իրավական

հետապնդման արդյունավետությունը: Դուրսգրումն իրականացվում է նախկինում ձևավորված արժեզրկումից պահուստի հաշվին. եթե դուրսգրման գումարը գերազանցում է ձևավորված պահուստը, տարբերությունը լրացուցիչ ճանաչվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Դուրսգրումից հետո հավաքագրված գումարները ճանաչվում են որպես եկամուտ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում:

13) Ակնկալվող պարտքային կորուստների որոշման հիմունքները

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով պահուստները բոլոր պարտքային գործիքներում մասով, որոնք չեն պահվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով՝

- Այլ համապարփակ ֆինանսկան արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնք հանդիսանում են պարտքային գործիքներ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և այլ ֆինանսական ակտիվներ՝ ամոտիզացված արժեքով չափվող:

Ընկերությունը չափում է կորստի գծով պահուստը 12-ամսյա ԱՊԿ համարժեք գումարով պարտքային ներդրումային արժեթղթերի և դրամական միջոցների և դրանց համարժեքների համար, քանի որ այդ մնացորդները որոշվել են որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ: 12-ամսյա ԱՊԿ-ն հանդիսանում է այնպիսի ԱՊԿ մաս, որը հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում կարող է հանգեցնել ֆինանսական գործիքի հավանական դեֆոլտային իրադարձությունների: Այն ֆինանսական գործիքները, որոնց մասով ճանաչվել է 12-ամսյա ԱՊԿ, համարվում են փուլ 1-ում գտնվող ֆինանսական գործիքներ:

Աբողջ ժամկետում ԱՊԿ առաջանում է ֆինանսական գործիքի ամբողջ ժամանակահատվածում բոլոր հնարավոր դեֆոլտային իրադարձություններից: Այն ֆինանսական գործիքները, որոնց մասով ճանաչվել է ամբողջ ժամկետում ԱՊԿ, համարվում են փուլ 2-ում գտնվող ֆինանսական գործիքներ: Փուլ 2-ում գտնվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ գրանցած, բայց պարտքային առումով չարժեզրկված գործիքներ են:

Այն ֆինանսական գործիքները, որոնց մասով ճանաչվել է ամբողջ ժամկետում ԱՊԿ և պարտքային առումով արժեզրկված են, համարվում են փուլ 3-ում գտնվող ֆինանսական գործիքներ:

Ընկերությունը չունի փուլ 2-ում և փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվներ: Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Ֆինանսական ակտիվները, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ, չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է):

Այլ ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է ԱՊԿ հաշվարկի պարզեցված մոտեցում: Հետևաբար, Ընկերությունը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, սակայն ճանաչում է կորուստի գծով պահուստ ամբողջ ժամկետում ԱՊԿ հիման վրա յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: ԱՊԿ գծով պահուստը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և այլ ֆինանսական ակտիվներ – որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում,

– Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ – ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորուստի գծով պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների հաշվեկշռային արժեքը հանդիսանում է դրանց իրական արժեքը: Այնուամենայնիվ, կորուստի գծով պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի պահուստում:

14) Տոկոսների հաշվեգրման դադարեցումը

Ընկերությունը դադարեցնում է տոկոսների հաշվեգրումը այն ֆինանսական ակտիվների գծով, որոնց դեպքում մայր գումարի կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված շեմից ավելի երկար ժամկետով, կամ երբ Ընկերությունը գնահատում է, որ պայմանագրային պայմաններով նախատեսված դրամական հոսքերի ամբողջական հավաքագրումը կասկածելի է դառնում, անկախ պաշտոնական ուշացման ժամկետից:

Տոկոսների հաշվեգրման դադարեցումից հետո նախկինում հաշվեգրված, սակայն դեռևս չստացված տոկոսագումարները վերանայվում են և անհրաժեշտության դեպքում արժեզրկվում են՝ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչելով համապատասխան կորուստը: Այդպիսի ակտիվների գծով տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է միայն դրամական հիմունքով (փաստացի ստացման պահին) կամ՝ եթե ակտիվն արժեզրկված է, հաշվարկվում է արժեզրկված հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսների հաշվեգրումը վերսկսվում է միայն այն դեպքում, երբ պարտապանը վերականգնում է իր վճարունակությունը, և Ընկերությունը ողջամտորեն վստահ է դրամական հոսքերի կանոնավոր ստացման վերաբերյալ. այդ դեպքում կուտակված, սակայն նախկինում չհաշվեգրված տոկոսագումարները ճանաչվում են աստիճանաբար՝ վերականգնված ժամանակացույցի հիման վրա:

Այլ անձանց կողմից կազմակերպության ակտիվներն օգտագործելիս առաջացող հասույթները՝ տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ, ճանաչվում են հետևյալ հիմունքներով՝

ա) տոկոսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը.

բ) շահաբաժինները ճանաչվում են, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ, ճանաչվում են, երբ՝

ա) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն,

բ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթների գումարը:

Տոկոսների հաշվեգրումը դադարեցվում է, երբ հայտնի է դառնում, որ բավարարված չէ վերոնշյալ պայմաններից թեկուզ և մեկը:

15) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները սկզբնական ճանաչման պահին չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով) ՀՀ դրամով, որը ներառում է ձեռքբերման գինը, ուղղակիորեն վերագրելի ծախսումները՝ ակտիվն օգտագործման համար պատրաստ վիճակի բերելու համար, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ապամոնտաժման և տեղանքի վերականգնման ծախսումների գնահատված արժեքը: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում: Հետագա ժամանակաշրջաններում հիմնական միջոցները հաշվառվում են ինքնարժեքից հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի օգտակար ծառայության ընթացքում դրանց մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է և ճանաչվում է որպես ծախս: Ընկերությունում կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Հիմնական միջոցներ	**Օգտակար ծառայության ժամկետ (տարի)**	**Տարեկան տոկոսադրույք (%)**
Գույք և գրասենյակային սարքավորումներ	3 - 8	33.3 - 12.5
Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա	1 – 5	100 - 20
Փոխադրամիջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	3 -8	33.3 - 12.5

Վարձակալություն

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կարող է վարձակալել հող, շենք և տարածքներ, այլ հիմնական միջոցներ, ինչպես նաև դրանց գծով կատարել կապիտալ ներդրումներ: Ընկերության գրասենյակը գործում է վարձակալած տարածքներում: Ընկերությունը, համաձայն ՖՀՄՍ 16-ի պահանջների, վարձակալած տարածքների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ՝ կիրառելով օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույք:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով) և հետագայում հաշվառվում են ինքնարժեքից հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերաբար բաշխվում է օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկի համար կիրառվում է գծային մեթոդը և յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը ճանաչվում է ծախս: Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությունը:

Ընթացիկ ծախսումները, որոնք չեն բավարարում ակտիվացման չափանիշներին (օրինակ՝ սովորական վերանորոգման և սպասարկման ծախսումները), ճանաչվում են ծախս՝ դրանց կատարման ժամանակաշրջանում: Հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես տարբերություն օտարումից ստացված զուտ հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև, և ճանաչվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում:

16) Հաճախորդների միջոցներ

Հաճախորդների անունից և հաշվին Ընկերության կողմից պահվող դրամական միջոցներն ու ֆինանսական գործիքները հանդիսանում են հաճախորդների սեփականությունը և չեն ներառվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես Ընկերության ակտիվ, քանի որ Ընկերությունը դրանց նկատմամբ չի կրում սեփականատիրական ռիսկեր և օգուտներ, այլ հանդես է գալիս որպես հավատարմագրային կառավարիչ կամ գործակալ: Այս միջոցները հաշվառվում են առանձին հաշիվների վրա և բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում որպես արտահաշվեկշռային հոդվածներ:

Ընկերությունը հաճախորդների միջոցների կառավարման համար պահպանում է դրանց առանձնացումը սեփական միջոցներից՝ համապատասխան Հայաստանի Հանրապետության օրենսդրության և կարգավորող մարմնի պահանջներին: Հաճախորդների միջոցների գծով Ընկերության ստացած միջնորդավճարները և հանձնաժողովավճարները ճանաչվում են որպես եկամուտ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, երբ մատուցվել է համապատասխան ծառայությունը:

Հաճախորդների միջոցների կորստի կամ պարտապանի կողմից չկատարման ռիսկը կրում է հաճախորդը, բացառությամբ այն դեպքերի, երբ կորուստն առաջացել է Ընկերության անփութության, պայմանագրային պարտավորությունների խախտման կամ գործող օրենսդրության հետ անհամապատասխանության հետևանքով, ինչի դեպքում Ընկերությունը կարող է կրել համապատասխան պատասխանատվություն:

17) Պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ

Ընկերության համար պայմանական պարտավորություն է համարվում.

ա) հնարավոր պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից. կամ

բ) ներկա պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը, սակայն, չի ճանաչվում հետևյալ պատճառներով՝

i. հավանական չէ, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. կամ

ii. պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Ընկերության համար պայմանական ակտիվ է համարվում. հնարավոր ակտիվը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից: Պայմանական ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում:

ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Ընկերությունը չունի իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

գ) Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի: Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

17) Ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունք

Ընկերության համար պահուստ է համարվում անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն:

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Եթե վերը նշված պայմանները չեն բավարարվում, ապա պահուստ չի ճանաչվում: Հազվադեպ դեպքերում կարող է հստակ չլինել, թե արդյոք գոյություն ունի ներկա պարտականություն: Այս դեպքերում համարվում է, որ անցյալ դեպքը հանգեցրել է ներկա պարտականության, եթե, հաշվի առնելով հասանելի բոլոր վկայությունները, ավելի շատ հավանական է, քան ոչ, որ ներկա պարտականությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունի:

Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար հաշվի են առնվում այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և հանգամանքներում: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Որպես զեղչման դրույք վերցվում է այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, արտացոլվում են պահուստի գումարում, երբ բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալու:

Ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները հաշվի չեն առնվում պահուստը չափելիս:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի: Փոխհատուցումը դիտվում է որպես առանձին ակտիվ: Փոխհատուցման գծով ճանաչված գումարը չպետք է գերազանցի պահուստի գումարը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պահուստին վերաբերող ծախսը կարող է ներկայացվել զուտ հիմունքով՝ հանելով փոխհատուցման գծով ճանաչված գումարը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Ապագա գործառնական վնասների համար պահուստներ չեն ճանաչվում:

Եթե Ընկերությունն ունի անբարենպաստ պայմանագիր, ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը ճանաչվում և չափվում է որպես պահուստ:

Վերակազմավորման գծով պահուստը պետք է ներառի միայն ուղղակիորեն վերակազմավորումից առաջացող ծախսումները, որոնք՝

ա) անպայմանորեն հետևանք են վերակազմավորման.

բ) կապված չեն Ընկերության անընդհատ գործունեության հետ:

18) Տարբերակումն այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություններից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ

Ընկերությունը ակտիվ կամ պարտավորություն ճանաչում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ գործարքի կամ իրադարձության արդյունքում Ընկերությունն արդեն իսկ ունի ընթացիկ պարտավորություն կամ իրավունք՝ բխող անցյալ իրադարձություններից, տնտեսական օգուտների արտահոսքը կամ ներհոսքը հավանական է, և գումարը կարող է հուսալիորեն չափվել: Այս սկզբունքին համապատասխան՝ Ընկերության հաշվեկշռում ճանաչվում են, մասնավորապես, տրված և ստացված փոխատվությունները, ներդրումները, թողարկված պարտքային արժեթղթերը և այլ պայմանագրային պարտավորություններ, որոնց գծով պայմանագրային կողմերն արդեն ստանձնել են փոխադարձ կատարման ենթակա պարտավորություններ:

Ի տարբերություն սրա, պայմանական պարտավորությունները (հնարավոր պարտավորություններ, որոնց առկայությունը հաստատվելու է միայն ապագա անորոշ իրադարձության տեղի ունենալով կամ չունենալով, որը լիովին Ընկերության վերահսկողության ներքո չէ, կամ ընթացիկ պարտավորություններ, որոնց դեպքում տնտեսական օգուտների արտահոսքը հավանական չէ կամ գումարը չի կարող բավարար հուսալիությամբ չափվել) հաշվեկշռում չեն ճանաչվում: Այդպիսի հոդվածներ են, օրինակ, տրված երաշխիքները, չօգտագործված վարկային գծերը և պարտավորությունները, դատական հայցերը՝ մինչև պատասխանատվության հավանականության և գումարի հուսալի գնահատման հաստատումը, ինչպես նաև այլ պայմանավորվածություններ, որոնց ֆինանսական ազդեցությունը կախված է ապագա իրադարձություններից: Այս հոդվածները չեն ազդում ֆինանսական վիճակի մասին

հաշվետվության վրա, սակայն բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ որպես պայմանական պարտավորություններ և պայմանավորվածություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտների արտահոսքի հավանականությունը գնահատվում է աննշան։

Ընկերությունը կանոնավոր հիմունքով վերանայում է պայմանական իրադարձությունների դասակարգումը՝ գնահատելով, թե արդյոք փոփոխված հանգամանքների արդյունքում ճանաչման չափանիշները այլևս բավարարվում են, ինչի դեպքում համապատասխան հոդվածը վերադասակարգվում և ճանաչվում է որպես պահուստ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում։

19) Ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը

Ընկերությունը, հաշվի առնելով իր՝ որպես ներդրումային ընկերության գործունեության բնույթը և դրան բնորոշ ընդհանուր ռիսկերը (այդ թվում՝ գործառնական, իրավական և համբավի ռիսկեր, որոնք ուղղակիորեն կապված չեն կոնկրետ նույնականացված ակտիվի կամ պարտապանի հետ), կարող է ձևավորել լրացուցիչ հատկացումներ/պահուստներ՝ Կենտրոնական բանկի կարգավորող պահանջներին համապատասխան։ Այս հատկացումների նպատակն է ապահովել Ընկերության ֆինանսական կայունությունը՝ չկանխատեսված կորուստների դեմ, որոնք դեռևս չեն դրսևորվել կոնկրետ ակտիվների արժեզրկման տեսքով։

Ընդհանուր ռիսկերի դիմաց կատարվող հատկացումները հաշվապահական հաշվառման տեսանկյունից չեն համապատասխանում ՖՀՄՍ-ի համաձայն պահուստի ճանաչման չափանիշներին, քանի որ դրանք չեն բխում կոնկրետ անցյալ իրադարձությունից և չունեն հուսալիորեն չափելի ընթացիկ պարտավորություն։ Այդ իսկ պատճառով նման հատկացումները չեն ճանաչվում որպես ծախս շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, այլ իրականացվում են չբաշխված շահույթի բաշխման միջոցով՝ որպես սեփական կապիտալի առանձին բաղադրիչ (ընդհանուր ռիսկերի պահուստ/ֆոնդ)։

Այս պահուստի չափը որոշվում է Ընկերության կառավարման մարմնի կողմից՝ հիմնվելով պատմական տվյալների, ընթացիկ պորտֆելի կառուցվածքի և կարգավորող մարմնի սահմանած նվազագույն շեմերի վրա, և վերանայվում է առնվազն տարեկան կտրվածքով։ Պահուստի մեծության փոփոխությունը չի ազդում տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքի վրա և արտացոլվում է միայն սեփական կապիտալի կազմում՝ չբաշխված շահույթից ընդհանուր ռիսկերի պահուստ վերադասավորման միջոցով։

20) Կապիտալ և էմիսիոն եկամուտ

Կանոնադրական կապիտալը ներկայացվում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերով սահմանված և գրանցված չափով՝ մասնակիցների կամ բաժնետերերի կողմից ամբողջությամբ վճարված մասով։ Կանոնադրական կապիտալում փոփոխությունները (ավելացում կամ

նվազեցում) ճանաչվում են միայն համապատասխան իրավական ընթացակարգերի ավարտից և պետական գրանցումից հետո:

Էմիսիոն եկամուտը ներկայացնում է բաժնետոմսերի կամ մասնակցային բաժնեմասերի տեղաբաշխումից ստացված հասույթի և դրանց անվանական արժեքի միջև դրական տարբերությունը: Այն ճանաչվում է որպես սեփական կապիտալի առանձին բաղադրիչ և չի ներառվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Բաժնետոմսերի կամ մասնակցային բաժնեմասերի թողարկման հետ անմիջականորեն կապված ծախսումները (օրինակ՝ իրավաբանական, խորհրդատվական և գրանցման վճարներ) նվազեցվում են էմիսիոն եկամտից՝ հարկային ազդեցությունը հաշվի առնելով, և, եթե էմիսիոն եկամուտը բավարար չէ, նվազեցվում են ուղղակիորեն սեփական կապիտալից:

Սեփական կապիտալի գործիքների հետգնումը (սեփական բաժնետոմսերի ձեռքբերումը) ճանաչվում է սեփական կապիտալից նվազեցմամբ՝ ձեռքբերման ինքնարժեքով, առանց շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում որևէ օգուտ կամ վնաս ճանաչելու: Հետագայում այդպիսի գործիքների վերավաճառքից կամ չեղարկումից առաջացած տարբերությունը ևս ճանաչվում է անմիջապես սեփական կապիտալում:

21) Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Ընկերության գործառնական և ներկայացման արժույթը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ): Արտարժույթով արտահայտված գործարքները սկզբնական ճանաչման պահին վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով գործարքի կատարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված պաշտոնական միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային (փողային) ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ կիրառելով տվյալ ամսաթվի դրությամբ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական ինքնարժեքով, վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով, իսկ իրական արժեքով չափվող ոչ դրամային հոդվածները՝ իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացած արտարժութային տարբերությունները (փոխարժեքային օգուտ կամ վնաս) ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջացել են, բացառությամբ այն արտարժութային տարբերությունների, որոնք վերաբերում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով հաշվառվող հոդվածներին (օրինակ՝ դրամական հոսքերի հեջավորման գործիքներին), որոնց դեպքում համապատասխան տարբերությունը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ մինչև հեջավորվող հոդվածի ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա:

22) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է դրանց զուտ գումարը միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ընթացիկ և իրավականորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև մտադրություն է կա՛մ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կա՛մ միաժամանակ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը։

Հաշվանցման իրավական իրավունքը չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից, և այն պետք է իրագործելի լինի ինչպես Ընկերության բնականոն գործունեության ընթացքում, այնպես էլ պարտապանի կամ Ընկերության ցանկացած կողմի սնանկության կամ վճարունակության կորստի դեպքում։ Համընդհանուր հիմնական համաձայնագրերով (օրինակ՝ ISDA կամ նմանատիպ շրջանակային պայմանագրերով) կնքված գործարքները, որոնք նախատեսում են հաշվանցման իրավունք միայն սահմանված իրադարձության (օրինակ՝ պարտապանի կողմից չկատարման) դեպքում, ընթացիկ իրավականորեն ամրագրված իրավունք չեն համարվում և, հետևաբար, չեն հաշվանցվում. այդպիսի ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում առանձին-առանձին, համախառն գումարով։

Հաշվանցման վերոնշյալ չափանիշները չբավարարող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ Ընկերությունը կիրառելիության դեպքում ծանոթագրություններում բացահայտում է հաշվանցման ենթակա հնարավոր գումարները՝ ներառյալ համապատասխան համաձայնագրերով նախատեսված պայմանական հաշվանցման իրավունքները, նույնիսկ եթե դրանք հաշվեկշռում զուտացված չեն ներկայացվում։

23) Ֆինանսական ակտիվների վերադասակարգումները

Ընկերությունը ֆինանսական ակտիվը վերադասակարգում է մեկ չափման կատեգորիայից մյուսը միայն այն դեպքում, երբ փոփոխվում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը, որի շրջանակում պահվում է տվյալ ակտիվը։ Այդպիսի փոփոխությունը սպասվում է չափազանց հազվադեպ և տեղի է ունենում միայն Ընկերության արտաքին կամ ներքին գործունեության մեջ էական փոփոխության արդյունքում, որը ցուցադրելի է արտաքին կողմերի համար (օրինակ՝ Ընկերության կողմից ամբողջական բիզնես ուղղության ձեռքբերում, դադարեցում կամ վերակազմավորում)։ Ընդհանուր առմամբ, պարտապանի կողմից չկատարման հավանականության փոփոխությունը, շուկայական պայմանների ժամանակավոր տատանումները կամ առանձին ակտիվների նկատմամբ մտադրության փոփոխությունը բիզնես մոդելի փոփոխություն և, հետևաբար, վերադասակարգման հիմք չեն համարվում։

Վերադասակարգումը կիրառվում է հեռանկարային հիմունքով՝ վերադասակարգման ամսաթվից սկսած, առանց նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված արդյունքների կամ ճանաչված օգուտների ու վնասների վերահաշվարկման։ Վերադասակարգման ամսաթվի դրությամբ ակտիվի իրական արժեքը դառնում է դրա նոր հաշվեկշռային արժեքը (ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիա մուտք գործելու դեպքում)՝ որի հիման վրա հաշվարկվում է նոր արդյունավետ տոկոսադրույքը, կամ, ընդհակառակը, նախկինում ամորտիզացված արժեքով հաշվառված ակտիվի իրական արժեքի հետ առաջացած

տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքով չափվող կատեգորիա մուտք գործելու դեպքում) կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (եթե ակտիվը վերադասակարգվում է վաճառքի համար մատչելի կատեգորիա)։

Ֆինանսական պարտավորությունների վերադասակարգում չի թույլատրվում։ Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում բացահայտում է՝ արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվների վերադասակարգում, ինչպես նաև դրա պատճառը և ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա։

Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ				
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	5,101	48,368	10,469	15,101
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	94,449	257,993	17,255	17,255
Տոկոսային եկամուտներ փոխառություններից	-	-	573	9,465
Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից	-	-	-	-
Տոկոսային եկամուտներ սվոպի գծով	-	-	-	-
Այլ տոկոսային եկամուտներ	-	-	-	-
Ընդամենը	**99,550**	**306,361**	**28,297**	**41,821**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր				
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(28,169)	(79,947)	(8,736)	(23,057)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերից	-	-	(747)	(747)
Տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով	-	-	-	-
Տոկոսային ծախսեր սվոպի գծով	-	-	-	-
Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	-	-	-	-
Այլ տոկոսային ծախսեր	(6,494)	(20,417)	-	-
Ընդամենը	**(34,663)**	**(100,364)**	**(9,483)**	**(23,804)**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**64,887**	**205,997**	**18,814**	**18,017**

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ				
Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից	11,988	33,067	-	-
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից	-	-	-	-
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	13,277	31,385	-	-
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից	-	-	-	-
Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից	45,890	105,150	28,417	63,096
Պահառության գործունեությունից	389	650	-	-
Այլ միջնորդավճարներ	14,182	14,450	-	-
Ընդամենը	**85,726**	**184,702**	**28,417**	**63,096**

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս				
Միջնորդավճարների գծով ծախսեր	(38,849)	(139,288)	(7,135)	(7,675)
Ընդամենը	**(38,849)**	**(139,288)**	**(7,135)**	**(7,675)**
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**46,877**	**45,414**	**21,282**	**55,421**

Ծանոթագրություն 5. Եկամուտ շահութաբաժիններից

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ	-	-	-	-
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ	-	-	-	-
Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ	-	-	-	-
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ	-	-	-	-
Ընդամենը	**-**	**-**	**-**	**-**

Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ				
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	7,605	7,605	-	-
Ընդամենը	**7,605**	**7,605**	**-**	**-**
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ				
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	-	-	-	-
Ընդամենը	**-**	**-**	**-**	**-**
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտներ				
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	101,253	201,506	(971)	(12,110)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(5,393)	6,915	(9,946)	(564)
Ընդամենը	**95,861**	**208,422**	**(10,917)**	**(12,674)**
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**103,466**	**216,027**	**(10,917)**	**(12,674)**

Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Այլ գործառնական եկամուտ				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-	(8,680)	(8,680)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-	-	-
Այլ եկամուտներ	2,878	29,326	24,746	52,109
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**2,878**	**29,326**	**16,066**	**43,429**

Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Ներդրումների գծով				
Պահուստի սկզբնական մնացորդ	(12,616)	(11,371)	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	(1,169)	(2,414)	-	-
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	**(1,169)**	**(2,414)**	-	-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-	-
Պահուստի վերջնական մնացորդ	**13,785**	**13,785**	**-**	**-**

Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր

	01.07.26 – 30.09.26	01.01.26 – 30.09.26	01.07.25 – 30.09.25	01.01.25 – 30.09.25
Ընդհանուր վարչական ծախսեր				
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(484,231)	(1,228,609)	(298,346)	(531,479)
Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով	-	-	(55,818)	(55,818)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(52,432)	(154,584)	(131,966)	(148,518)
Անձնակազմի այլ ծախսեր	(24,626)	(57,351)	123,599	(16,143)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	(1,221)	11,940	-
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների	(22,540)	(60,707)	(146)	(491)

տեխնիկական սպասարկման եւ պահպանման գծով ծախսեր				
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(113,870)	(229,968)	(59,803)	(125,104)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(59)	(19,552)	(10,592)	(15,267)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(3,653)	(28,409)	(21,990)	(27,696)
Ծախսեր հարկերի (բացառությամբ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	-	-	(87,076)	(92,572)
Տրանսպորտային ծախսեր	-	-	2,092	(1,437)
Բաժանորդագրությունների գծով ծախսեր	(23,641)	(23,641)	-	-
Այլ վարչական ծախսեր	(92,602)	(132,561)	(22,544)	(62,223)
Ընդամենը ընդհանուր վարչական ծախսեր	**(817,654)**	**(1,936,603)**	**(550,650)**	**(1,076,748)**

2026թ. 3-րդ եռամսյակի վերջի դրությամբ աշխատողները 55-ն են, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին աշխատավարձը՝ 2,181 հազ. դրամ:

Ընկերությունը գործունեությունը իրականացնում է վարձակալությամբ ստացված տարածքներում:

Ծանոթագրություն 10. Այլ գործառնական ծախսեր

	01.07.26 – 30.09.26	**01.01.26 – 30.09.26**	**01.07.25 – 30.09.25**	**01.01.25 – 30.09.25**
Հասարակական կապերի գծով ծախսեր	-	-	-	-
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	(392,663)	(683,072)	(20,110)	(85,021)
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(9,749)	(108,638)	(12,723)	(17,944)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(22,718)	(43,600)	(33,413)	(57,074)
Այլ ծախսեր	-	-	(2,835)	(2,835)
Ընդամենը	**(425,130)**	**(835,310)**	**(69,081)**	**(162,874)**

Ծանոթագրություն 11. Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)

	01.07.26 – 30.09.26	**01.01.26 – 30.09.26**	**01.07.25 – 30.09.25**	**01.01.25 – 30.09.25**
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-	-	-
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները	-	-	-	-
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում (ծախս)	1,505	3,248	-	-
Ընդամենը	**1,505**	**3,248**	**-**	**-**

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի շահութահարկի գումարը հարկվող գումարի նկատմամբ հաշվարկվում է 18 տոկոս դրույքաչափով:

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ

	Մնացորդն առ 31.12.2025 դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդն առ 30.09.2026 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	**63,086**	**(4,527)**	**-**	**58,559**
Վարձակալության գծով պարտավորություններ	53,711	(6,319)	-	47,392
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	2,047	224	-	2,271
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ	7,328	1,568	-	8,896
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	**(59,020)**	**7,775**	**-**	**(51,034)**
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(53,846)	7,775	-	(46,071)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	(5,174)	-	211	(4,963)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**4,066**	**3,248**	**211**	7,525

Ծանոթագրություն 12. Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում

	առ 30.09.26	առ 31.12.25
Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ Կենտրոնական բանկում		
Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր	-	-
Կանոնադրական կապիտալի կուտակման հաշիվ Կենտրոնական բանկում	**-**	**-**
Դեպոնացված միջոցներ Կենտրոնական բանկում	**-**	**-**
Հաշվեգրված տոկոսներ	**-**	**-**
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում	-	-

Ծանոթագրություն 13. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	առ 30.09.26	առ 31.12.25
Ընթացիկ հաշիվներ		
Հայաստանի Հանրապետության բանկերում	316,271	201,872
Այլ ֆինանսական կազմակերպություններում	115,300	-
Դեպոնացված հաշիվներ բանկերում	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	**431,571**	**201,872**
Տրամադրված փոխառություններ և ավանդներ, այլ պահանջներ		
Կենտրոնական բանկում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներ, ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
Բանկերում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներ, ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	**431,571**	**201,872**
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)	-	-
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**431,571**	**201,872**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ։

Ծանոթագրություն 14. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

	առ 30.09.26	առ 31.12.25
Պահանջներ հաճախորդների նկատմամբ		
Տրամադրված փոխառություններ, այդ թվում՝ Հայաստանի հանրապետության կառավարությանը, Հայաստանի հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին	154,800	163,800
Ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
Արժեթղթերի փաթեթի կառավարում	-	-
Այլ	-	-
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը պահանջներ	**154,800**	**163,800**
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)	-	-
Ընդամենը զուտ պահանջներ	**154,800**	**163,800**

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց և խնդրահարույց վարկեր և տրամադրած փոխառություններ չի ունեցել:

Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

Հաճախորդների նկատմամբ պահանջների աշխարհագրական վերլուծություն

	առ 30.09.26	Տոկոսային հարաբերությունը	առ 31.12.25	Տոկոսային հարաբերությունը
Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծություն ն ըստ ռեզիդենտության				
Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ	154,800	100%	163,800	100%
ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ	-	-	-	-
ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ	-	-	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-		-	
Ընդամենը	**154,800**	**100%**	**163,800**	**100%**

Ծանոթագրություն 15. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	առ 30.09.26	առ 31.12.25
Պետական արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր, այդ թվում՝	633,697	**717,929**
Գանձապետական պարտատոմսեր	633,697	717,929
Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
Այլ	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	**633,697**	**717,929**
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**633,697**	**717,929**

Ծանոթագրություն 16. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	առ 30.09.2026	առ 31.12.2025
Պետական արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր, այդ թվում՝		
Գանձապետական պարտատոմսեր	3,353,626	2,276,823
Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
այլ	-	-
Հաշվեգրված տոկոսներ	48,941	35,059
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող պետական արժեթղթեր	3,402,566	2,311,882
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ) (ծանոթագրություն 8)	(7,338)	(7,038)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող պետական արժեթղթեր	3,395,229	2,304,844

«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»-ի դասում հաշվառվող ռեպո համաձայնագրով վաճառված ՀՀ պետական պարտատոմսերի արժեքը 921,799 հազ. դրամ է:

Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	**Ցուցակված**	**Չցուցակված**	**Ցուցակված**	**Չցուցակված**
ԲԲԲ+/Baa1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝				
Երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	406,544	-	409,695
Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
Այլ	-	-	-	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ոչ պետական արժեթղթեր	-	**406,544**	**-**	**409,695**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ) (ծանոթագրություն 8)	-	**(3,653)**		**(3,007)**
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ոչ պետական արժեթղթեր	-	**402,891**		**406,688**

Ծանոթագրություն 17. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Օգտ. իրավունքի ձևով ակտիվներ	Այլ հիմնական միջոցներ	Համակ. ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Մնացորդը առ 01.01.2025թ.	**-**	**38,028**	**-**	**107,621**	**-**	**-**	**16,830**	**162,479**
Ավելացում	50,562	80,433	197,890	616,042	55,543	4,298	44,265	1,049,033
Օտարում	(263)	(37,912)	(897)	-	(3,453)	-	(327)	(42,851)
Մնացորդը առ 31.12.2025թ.	**50,299**	**80,549**	**196,993**	**723,664**	**52,090**	**4,298**	**60,768**	**1,168,661**
Ավելացում	35,328	-	67,646	12,092	41,908	-	150,164	307,137
Օտարում	(7,472)	-	(5,273)	-	-	-	-	(12,745)
Ներքին տեղաշարժ	-	-	(4,592)	-	4,592	-	-	-
Մնացորդը առ 30.09.2026թ.	**78,154**	**80,434**	**254,890**	**735,757**	**98,588**	**4,298**	**210,932**	**1,463,054**
Կուտակված մաշվածություն								
Մնացորդը առ 01.01.2025թ.	**-**	**(17,430)**	**-**	**(8,967)**	**-**	**-**	**-**	**(26,397)**
Ավելացում	(7,341)	(8,167)	(14,364)	(65,283)	(4,595)	(374)	(7,545)	**(107,669)**
Օտարում	33	22,257	125	-	200	-	27	**22,642**
Մնացորդը առ 31.12.2025թ.	**(7,308)**	**(3,341)**	**(14,239)**	**(74,250)**	**(4,395)**	**(374)**	**(7,518)**	**(111,424)**
Ավելացում	(16,873)	(7,541)	(24,870)	(93,590)	(9,041)	(323)	(35,112)	(187,350)
Օտարում	**2,819**	**-**	**862**	**-**	**-**	**-**	**-**	**3,681**
Ներքին տեղաշարժ	**-**	**-**	**166**	**-**	**(166)**	**-**	**-**	**-**
Մնացորդը առ 30.09.2026թ.	**(21,394)**	**(12,791)**	**(36,438)**	**(167,841)**	**(13,604)**	**(696)**	**(42,330)**	**(295,092)**
Զուտ հաշվեկշռային արժեք								
առ 30.09.2026թ.	**56,761**	**67,642**	**218,452**	**567,916**	**84,985**	**3,602**	**168,602**	**1,167,960**
առ 31.12.2025թ.	**42,991**	**77,208**	**182,754**	**649,414**	**47,695**	**3,924**	**53,250**	**1,057,238**

Ծանոթագրություն 18. Այլ ակտիվներ

	առ 30.09.26	առ 31.12.25
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	20,464
Դեբիտորական պարտքեր մատակարարների գծով	-	-
Կանխավճարներ աշխատակիցներին	1,400	11,693
Կանխավճարներ մատակարարներին	48,122	91,432
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	2,085	-
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	21,298	13,056
Ընդամենը	**72,905**	**136,645**
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)	-	-
Ընդամենը	**72,905**	**136,645**
Պահեստ	9,818	7,918
Բոնուսագանձված գրավ և վաճառքի համար պահվող ակտիվներ	-	-
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	9,772	36,443
Հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
Այլ ակտիվներ	-	-
Ընդամենը	**19,590**	**44,361**
Ընդամենը այլ ակտիվներ	**92,495**	**181,006**

Ծանոթագրություն 19. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	առ 30.09.26	առ 31.12.25
ՀՀ Կենտրոնական բանկ		
Փոխառություններ	-	-
Ռեպո համաձայնագրեր	-	-
Այլ	-	-
ՀՀ բանկեր		
Փոխառություններ	-	-
Ռեպո (հետգնման) պայմանագրեր	2,077,148	1,966,779
Այլ	-	-
Հաշվեգրված տոկոսներ	**2,320**	**1,900**
Ընդամենը	**2,079,468**	**1,968,679**
Ֆինանսական կազմակերպություններ		
Փոխառություններ	-	-
Ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
Այլ	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	**2,079,468**	**1,968,679**
Ընդամենը պարտավորություններ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**2,079,468**	**1,968,679**

Ծանոթագրություն 20. Պահուստներ

Պահուստներ	առ 30.09.26	առ 31.12.25
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-

Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ ներդրումային ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 21. Այլ պարտավորություններ

Այլ պարտավորություններ	առ 30.09.26	առ 31.12.25
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	-	-
Շահութահարկի գծով	5,315	712
Ավելացված արժեքի հարկի գծով	9,913	10,709
Այլ հարկերի ու տուրքերի գծով	39,387	1,163
Սոցիալական ապահովագրության վճարումների գծով	4,198	-
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով	49,421	35,018
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	64,586	28,735
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	263,290	298,397
Այլ պարտավորություններ	18,087	-
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	**454,198**	**374,734**

Ծանոթագրություն 22. Կանոնադրական կապիտալ

1) Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, Ներդրումային ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 5,037,864 հազ. ՀՀ դրամ:
2) Ընկերության թողարկած և տեղաբաշխած սովորական բաժնետոմսերի քանակը, անվանական արժեքը, Ներդրումային ընկերության թողարկած և տեղաբաշխած սովորական բաժնետոմսերի քանակը 5,037,864 հատ է, յուրաքանչյուրը 1.0 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով,

3) Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ընկերության նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ.

Նշանակալից մասնակցի անունը,ազգանունը/անվանումը	**Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության գումարը**	**Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ**	**Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանականա նձանցհամար)**
Պարադեպլատց Լիմիթեդ ՍՊԸ	5,037,864,000	100 %	-

Ծանոթագրություն 23. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու եռամսյակում կազմակերպության հետ կապակցված կողմերի հետ գործարքներն իրականացվել են շուկայում գործող պայմաններին և տոկոսադրույքներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է ղեկավարներին տրամադրված փոխառությունների մնացորդները և ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը.

	առ 30.09.26	**առ 31.12.25**
Տրամադրված փոխառություններ ղեկավար անձնակազմին (այդ թվում հաշվեգրված տոկոսներ)	154,800	163,800
Ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրություն (ծանոթագրություն 9)	401,232	431,587

Ծանոթագրություն 24. Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ

Ընդհանուր նկարագրություն

Ռիսկերի կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ընկերության գործունեության համար և հանդիսանում է որոշիչ բաղադրիչ Ընկերության գործառնական գործունեության համար: Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը:

Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն փորձն արտացոլելու նպատակով:

Բաժնետերը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Ընկերության գործունեության իրականացումն ապահովելու համար:

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն բաժնետերերին:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության ներսում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

ա) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով:

Վարկային ռիսկը հաշվարկելիս հաշվի են առնվում ներդրումային ընկերության ակտիվները, բացառությամբ կանոնակարգ 4/02-ի 15-րդ կետի համաձայն՝ ներդրումային ընկերության հիմնական կապիտալից նվազեցվող ակտիվների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները:

Վարկային ռիսկը հաշվարկելիս՝ Ընկերության ակտիվները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները ծախսերի հաշվին ձևավորված իրենց համապատասխան հնարավոր կորուստների պահուստի գումարների չափով նվազեցվելուց հետո կշռվում են համապատասխան ռիսկի կշիռներով, որոնք սահմանված են կանոնակարգ 4/02-ով:

Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՎՌ = (ՎՌ1+ՎՌ2+…+ՎՌՆ)/Ն,

որտեղ՝

ՎՌ – վարկային ռիսկնէ՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՎՌ1, ՎՌ2, ..., ՎՌՆ – վարկային ռիսկն է՝ ըստ օրերի,

Ն – հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Յուրաքանչյուր օրվա վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՎՌ = (Ա1-Պ1)*Ռ1 + (Ա2-Պ2)*Ռ2 +…+ (ԱN-ՊN)*ՌN,

Որտեղ՝

Ա1, Ա2, ..., ԱN-ը Ընկերության ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք պակասեցվում են հիմնական կապիտալից), հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների,

Պ1, Պ2, …, ՊN-ը համապատասխան ակտիվների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետ հաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների գծով հնարավոր կորուստների պահուստների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների, Ռ1, Ռ2, ..., ՌN-ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներնեն:

Վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու նպատակով հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների նկատմամբ կիրառվում են կանոնակարգ 4/02-ով սահմանված վարկային ռիսկի փոխարկման գործոնները (ՎՌՓԳ): Հետհաշվեկշռային հոդվածները պահուստի չափո.0վ նվազեցնելուց հետո ՎՌՓԳ-ների միջոցով վերածվում են հաշվեկշռային վարկային ռիսկի, որից հետո կշռվում են ռիսկի համապատասխանկշիռներով:

Վարկային ռիսկի հաշվարկի ընթացքում կանոնակարգ 4/02-ով սահմանված դեպքերում և կարգով կիրառվում են վարկային ռիսկի զսպման մեխանիզմները (ՎՌԶՄ-ները): ՎՌԶՄ-ն հնարավորություն է տալիս ճշգրտել ներդրումային ընկերության վարկային ռիսկի գնահատականը, եթե առկա են վարկային ռիսկը ճշգրտող գործոններ: ՎՌԶՄ-ի կիրառման արդյունքում պահանջի ապահովված մասը ստանում է ապահովվածության կամ ապահովվածություն տրամադրող անձի ռիսկի կշիռը, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշիռը:

2026թ-ի Սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության վարկային ռիսկի մակարդակը կազմում է 2,604,674 հազ. ՀՀ դրամ, իսկ 2025թ-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 568,089 հազ. ՀՀ դրամ:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումները

Ստորև ներկայացված է Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական սեգմենտի վերլուծությունները.

Հաշվետու ժամանակաշրջան

	Հայաստանի Հանրապետություն	Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) երկրներ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) երկրներՏՀԶԿ) երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ					
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	313,394	-	36,283	81,894	431,571
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	154,800	-	-	-	154,800
Վաճառքի համար մատրելի ֆինանսական ակտիվներ	633,697	-	-	-	633,697

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	3,798,120	-	-	-	3,798,120
Այլ ակտիվներ	63,872	6,703	11,090	10,829	92,495
Ընդամենը ակտիվներ	**4,963,883**	**6,703**	**47,373**	**92,723**	**5,110,683**
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,079,468	-	-	-	2,079,468
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	403,453	1,973	2,489	46,284	454,198
Ընդամենը պարտավորություններ	**2,482,921**	**1,973**	**2,489**	**46,284**	**2,533,666**
Զուտ դիրք	**2,480,963**	**4,731**	**44,885**	**46,439**	**2,577,017**

Նախորդ ժամանակաշրջան

	Հայաստանի Հանրապետություն	Անկախ պետությունների համագործակցության և (այսուհետ՝ ԱՊՀ) երկրներ	Տեսեական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) երկրներ	Այլ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ					
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	201,872	-	-	-	201,872
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	163,800	-	-	-	163,800
Վաճառքի համար մատրելի ֆինանսական ակտիվներ	717,929	-	-	-	717,929
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	2,711,532	-	-	-	2,711,532
Այլ ակտիվներ	100,413		6,174	74,448	181,035
Ընդամենը ակտիվներ	**3,895,546**	**-**	**6,174**	**74,448**	**3,976,168**

Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,623,640	-	-	-	2,623,640
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	374,733	-	-	-	374,733
Ընդամենը պարտավորություններ	**2,343,412**	**-**	**-**	**-**	**2,343,412**
Զուտ դիրք	**1,552,134**	**-**	**6,174**	**74,448**	**1,632,756**

բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և վերահսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունը կառավարում է իր շուկայական ռիսկը՝ հեջավորելով դիրքերը:

<u>Արտարժութային ռիսկ</u>

Արժութային ռիսկը արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների, դրանց տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:

Արտարժութային դիրքը Ընկերության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է:

Արտարժութային դիրքերը սահմանվում են՝

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Արտարժութային առավելագույն դիրքը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.

1) արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծություններից առավելագույն մեծություն,

2) թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Արտարժութային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով: Արտարժութային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում արտարժութային ռիսկ պարունակող այն ակտիվները, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից:

Արտարժութային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով արտարժութային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ԱՌ = առավելագույն (ԱԱԴ1,ԱԱԴ2, …, ԱԱԴՆ) որտեղ՝

ԱՌ-արտարժութային ռիսկն է,

ԱԱԴ1, ԱԱԴ2, ..., ԱԱԴՆ - արտարժութային առավելագույն դիրքի 12 տոկոսն է՝ ըստ հաշվետու ամսվա օրերի,

«Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

2026թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության արտարժութային ռիսկի մակարդակը կազմում է 53,058 հազ. ՀՀ դրամ, իսկ 2025թ-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 16,512 հազ. ՀՀ դրամ:

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

Հաշվետու ժամանակաշրջան

	Հայաստանի Հանրապետություն	**I խմբի արտարժույթ**	**II խմբի արտարժույթ**	**Ընդամենը**
Ակտիվներ				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	230,608	194,049	6,914	431,571
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	154,800	-	-	154,800
Վաճառքի համար մատրելի ֆինանսական ակտիվներ	633,697	-	-	633,697
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	3,798,120	-	-	3,798,120

Այլ ակտիվներ	80,020	12,475	-	92,495
Ընդամենը ակտիվներ	**4,897,245**	**206,524**	**6,914**	**5,110,683**
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,079,468	-	-	2,079,468
Այլ պարտավորություններ	401,951	30,440	21,807	454,198
Ընդամենը պարտավորություններ	**2,481,419**	**30,440**	**21,807**	**2,533,666**
Զուտ դիրք	**2,415,826**	**176,084**	**(14,893)**	**2,577,017**

Նախորդ ժամանակաշրջան

	Հայաստանի Հանրապետություն	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	153,062	48,810	-	201,872
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	163,800	-	-	163,800
Վաճառքի համար մատրելի ֆինանսական ակտիվներ	717,929	-	-	717,929
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	2,711,532	-	-	2,711,532
Այլ ակտիվներ	135,816	40,337	4,882	181,035
Ընդամենը ակտիվներ	**3,882,139**	**89,147**	**4,882**	**3,976,168**
Պարտավորություններ				

Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,968,679	-	-	1,968,679
Այլ պարտավորություններ	373,459	470	804	374,733
Ընդամենը պարտավորություններ	**2,342,138**	**470**	**804**	**2,343,412**
Զուտ դիրք	**1,540,001**	**88,677**	**4,078**	**1,632,756**

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստփոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՏՌ = ՏՀՌ+ՏԸՌ,

որտեղ՝

ՏՌ – տոկոսադրույքի ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՏՀՌ – տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՏԸՌ – տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի, ինչպես նաև փոփոխվող տոկոսադրույքով մինչև մարման ժամկետը պահվող պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը, գրավադրված պարտքային արժեթղթերը, ինչպես նաև այն արտահաշվեկշռային ածանցյալ գործիքները, որոնց հիմքում ընկած է պարտքային արժեթուղթ: Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթերը, ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթերի գծով պարտավորությունները, որպես գրավ ստացված, ինչպես նաև Ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո գտնվող պարտքային արժեթղթերը:

Պարտքային արժեթղթերի դիրքը պարտքային արժեթղթերի (ներառյալ՝արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ՝արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է:

Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

2) կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

3) փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ:

Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը, որն էլ տոկոսադրույքի հատուկ ռիսկի մեծությունն է:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի.

1) պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական ինքնակառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,

2) հուսալի պարտքային արժեթղթեր, որոնց թվին են դասվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից «Բ-» և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերը,

3) այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերի դիրքերն ընդգրկվում են կանոնակարգ 4/02-ով սահմանված կշիռներով:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով:

Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՏՀՌ= (ՏՀՌ1+ ՏՀՌ2+…+ ՏՀՌՆ)/Ն, որտեղ՝

ՏՀՌ – տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՏՀՌ1, ՏՀՌ2, ..., ՏՀՌՆ – պարտքային արժեթղթերի համախառն դիրքն է՝ ըստ օրերի,

«Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկն իրականացվում է պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերի համախառն զուտ դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերություն:

Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկից հետո պարտքային արժեթղթերի երկար կամ կարճ դիրքերը բաշխվում են կանոնակարգ 4/02-ով սահմանված՝ մինչև մարումը ընկած ժամանակաշրջաններում և ժամանակային երեք գոտիներում՝ համապատասխան կշիռներով:

Տվյալ օրվա տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.

1) մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի նվազագույն դիրքի 10 տոկոս,

2) առաջին գոտու նվազագույն դիրքի 40տոկոս,

3) երկրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս,

4) երրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս,

5) առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս,

6) երկրորդ և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս,

7) առաջին և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 150 տոկոս,

8) պարտքային արժեթղթերի համախառն զուտ դիրքի 100 տոկոս:

Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՏՐՌ= (ՏՐՌ1+ ՏՐՌ2+…+ ՏՐՌՆ)/Ն, որտեղ՝

ՏՐՌ – տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՏՐՌ1, ՏՐՌ2, ..., ՏՐՌՆ – տոկոսադրույքների ընդհանուր ռիսկերն են՝ըստ օրերի,

«Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

2026թ-ի Սեպտեմբերի 30-ի դրությամբ ընկերության տոկոսային ռիսկի մակարդակը կազմում է 54,023 հազ. դրամ, իսկ 2025թ-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության տոկոսային ռիսկի մակարդակը կազմում էր 63,829 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	**մինչև 1 ամիս**		**1-ից մինչև 3 ամիս**		**3-ից մինչև 6 ամիս**		**6-ից մինչև 1 տարի**		**1-ից մինչև 5 տարի**		**5 տարուց ավելի**	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	**230,608**	**200,963**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ավանդներ	-	-										
Ռեպո համաձայնագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ	230,608	200,963	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝	**154,800**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ռեպո համաձայնագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ	154,800	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, այդ թվում	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	***633,697***	**-**	**-**	**-**
Երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	633,697	-	-	-
Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բաժնային գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ												
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	***777,326***	**-**	**-**	**-**	***293,256***	**-**	**-**	**-**	***2,243,791***	**-**	***483,747***	**-**

Այլ ակտիվներ	**80,020**	**12,475**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***1,242,754***	***213,438***	**-**	**-**	***293,256***	**-**	**-**	**-**	***2,877,488***	**-**	***483,747***	**-**
Պարտավորություններ												
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	**2,079,468**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Վարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ռեպո համաձայնագրեր	2,079,468	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
այլ պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	**401,951**	**52,247**	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	***2,481,419***	***52,247***	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Զուտ դիրք	***(1,238,665)***	***161,191***	**-**	**-**	***293,256***	**-**	**-**	**-**	***2,877,488***	**-**	***483,747***	**-**

Նախորդ ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	**մինչև 1 ամիս**		**1-ից մինչև 3 ամիս**		**3-ից մինչև 6 ամիս**		**6-ից մինչև 1 տարի**		**1-ից մինչև 5 տարի**		**5 տարուց ավելի**	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	**153,058**	**48,814**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ավանդներ												
Ռեպո համաձայնագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ	153,058	48,814	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝	**163,800**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ռեպո համաձայնագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ	163,800	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ , այդ թվում	**503,552**	-	-	-	-	-	-	-	**115,656**	-	**98,721**	-
Երկարաժամկետ պարտքային գործիքներ	503,552	-	-	-	-	-	-	-	115,656	-	98,721	-
Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բաժնային գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ												

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	***1,542,769***	-	-	-	-	-	-	-	***700,982***	-	***467,780***	-
Այլ ակտիվներ	**181,035**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	***2,544,214***	***48,814***	-	-	-	-	-	-	***816,638***	-	***566,502***	-
Պարտավորություններ												
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	***1,968,679***	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ռեպո համաձայնագրեր	1,968,679	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
այլ պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	**374,733**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	**2,343,412**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Զուտ դիրք	***200,802***	***48,814***	-	-	-	-	-	-	***816,638***	-	***566,502***	-

Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ունակության մասնակի կամ ամբողջությամբ կորստի վտանգն է:

Իրացվելիության ռիսկերը ի հայտ են գալիս անբավարար իրացվելիության կամ շուկայականից առավել բարձր արժեքով ձեռք բերման արդյունքում, ինչն արտահայտվում է այնուհետև Ընկերության եկամուտներում և ծախսերում: Առաջանում է այն ժամանակ, երբ Ընկերությունը չի կարողանում վերահսկել պասիվների կրճատումը և ապահովել ակտիվների աճ: Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի ընկերության պարտավորությունները կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարումը ընթացիկ ժամանակահատվածում կապված է ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետ խնդրի լուծման հետ՝ ստանալ առավելագույն շահութ, պահպանելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակը:

Իրացվելիության ռիսկի կառավարումը ակնկալում է.

-կանխիկ հոսքերի վերլուծություն,

-ակտիվների և պարտավորությունների դասակարգում ըստ պայմանագրային ժամկետների,

-շուկայի մոնիտորինգ:

Ընկերությունում իրացվելիության կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում ակտիվների կառավարման մեթոդը:

Իրացվելիության առաջնային աղբյուրները Ընկերության դրամարկղն է և հաշվարկային հաշիվներում առկա միջոցները: Իրացվելիության երկրորդային աղբյուրները բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվներն են, որոնք կարճ ժամկետում և նվազագույն կորուստների ռիսկով կարելի է փոփոխել կանխիկ դրամական միջոցների: Դրանք ձևավորվում են ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից:

Իրացվելիության կառավարման համար կիրառում են նաև իրացվելի ակտիվները վաճառելու մեթոդը, երբ իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Ընկերությունը դրամական միջոցներ ստանալու նպատակով վաճառում է ակտիվներ և պարտավորությունների կառավարման մեթոդն է, որը ենթադրում է ֆինանսական շուկայում արտաքին փոխառությունների, վարկերի, ռեպո-համաձայնագրերի միջոցով փոխառու միջոցների ներգրավվում ու ակտիվների և պարտավորությունների միջև անհրաժեշտ հարաբերակցության հաստատում: Իրացվելիության

ռիսկը կառավարելու և վերահսկելու նպատակով Ընկերությունը պարբերաբար կատարում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության մոնիտորինգ՝ արտաքին միջավայրի փոփոխության դեպքում իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

Ընթացիկ ժամանակաշրջան

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	463,726	-	-	-	-	-	463,726
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	157,800	-	-	-	-	-	157,800
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	725,268	-	725,268
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,150,611	397,609	-	287,837	1,563,741	-	3,399,799
Այլ ակտիվներ	201,931	-	-	-	-	-	201,931
Ընդամենը ակտիվներ	***1,974,068***	***397,609***	**-**	***287,837***	***2,289,009***	**-**	***4,948,523***
Պարտավորություններ							
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	906,729	-	-	-	-	-	906,729
Այլ պարտավորություններ	426,606	-	-	-	-	-	426,606
Ընդամենը պարտավորություններ	***1,333,335***	-	-	-	-	-	***1,333,335***

Նախորդ ժամանակաշրջան

ԱԿՏԻՎՆԵՐ	**Մարմանը մնացել է**					**Անժամկետ**	**Ընդամենը**
	մինչև 1 ամիս	**1-3 ամիս**	**3-6 ամիս**	**6-12 ամիս**	**1 տարուց ավելի**		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	201,872	-	-	-	-	-	201,872
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	163,800	-	-	-	-	-	163,800
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	503,552	-	-	-	214,377	-	717,929
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,542,769	-	-	-	1,168,763	-	2,711,532
Այլ ակտիվներ	181,035	-	-	-	-	-	181,035
Ընդամենը ակտիվներ	***2,593,028***	**-**	**-**	**-**	***1,383,140***	**-**	***7,491,006***
Պարտավորություններ							
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,968,679	**-**	**-**	**-**	**-**	**-**	1,968,679
Այլ պարտավորություններ	374,733	-	-	-	-	-	374,733
Ընդամենը պարտավորություններ	***2,343,412***	-	-	-	-	-	***2,343,412***

Ծանոթագրություն 25. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով Ընկերության շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Ընկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:

Ընթացիկ ժամանակաշրջան

ԱՄԻՍՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԸ	ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Համարժեքային նորմատիվի մեծություն
Հունվար	2,181,578,000	2,152,191,000	300,000,000	350,000,000	46.73
Փետրվար	2,016,576,000	1,978,114,000	300,000,000	350,000,000	36.17
Մարտ	2,446,699,000	2,410,909,000	300,000,000	350,000,000	40.58
Ապրիլ	5,005,459,000	4,975,258,000	300,000,000	350,000,000	129.62
Մայիս	4,859,627,000	4,827,537,000	300,000,000	350,000,000	170.87
Հունիս	4,631,105,000	4,598,618,000	300,000,000	350,000,000	132.44
Հուլիս	4,405,450,000	4,372,865,000	300,000,000	350,000,000	127.1
Օգոստոս	4,078,801,000	4,038,886,000	300,000,000	350,000,000	85.58
Սեպտեմբեր	3,689,749,000	3,652,261,000	300,000,000	350,000,000	63.96

Նախորդ ժամանակաշրջան

ԱՄԻՍՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԸ	ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Համարժեքային նորմատիվի մեծություն

Հունվար	475,264,000	475,264,000	300,000,000	350,000,000	73.93
Փետրվար	461,146,000	461,146,000	300,000,000	350,000,000	70.30
Մարտ	428,439,000	428,439,000	300,000,000	350,000,000	75.42
Ապրիլ	371,047,000	371,047,000	300,000,000	350,000,000	102.68
Մայիս	295,336,000	295,336,000	300,000,000	350,000,000	40.71
Հունիս	298,352,000	298,352,000	300,000,000	350,000,000	28.23
Հուլիս	470,741,000	470,741,000	300,000,000	350,000,000	31.60
Օգոստոս	648,004,000	647,747,000	300,000,000	350,000,000	35.37
Սեպտեմբեր	2,809,472,000	2,804,791,000	300,000,000	350,000,000	133.2

Ծանոթագրություն 26. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:

Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

Ծանոթագրություն 27. Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում չունի այնպիսի ֆինանսական գործիք, որը հաշվառվում է որպես կանխատեսված ապագա գործարքների հետ կապված հեջ:

Ծանոթագրություն 28. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ վերանում է ակտիվի իրավունքի պահանջը: Ընկերության հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական ակտիվ չի հաշվառվում:
Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ նա մարվում է, համարվում է չեղյալ կամ դառնում է ժամկետանց: Ընկերության հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական պարտավորություն չի հաշվառվում:

Ծանոթագրություն 29. Գրավադրված ակտիվներ

2026թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված ակտիվներ:

Ծանոթագրություն 30. Ընդունված գրավ

2026թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերությունը չունի ընդունված գրավ:

Ծանոթագրություն 31. Պարտավորությունների չկատարում/խախտում

Ընկերությունն 2026թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ հաշվեկշռում չունի հաշվառված այնպիսի պարտավորություններ, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները Ընկերության կողմից խախտվել են: Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային ընկերության կողմից որևէ պայմանագրային պարտավորություն չի խախտվել:

Գործադիր տնօրեն Ի. Բելիշեվա

Ֆինանսական տնօրեն Ք.Քարամյան

«Վիլկո» ՍՊԸ ղեկավարության հայտարարությունը

Ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված եռամսյակի գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին,
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ապահովել, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման վարումը կազմակերպելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

Գործադիր տնօրեն
Իրինա Բելիշեվա

15 Հոկտեմբեր 2026

Ֆինանսական տնօրեն
Քրիստինա Քարամյան

«Վիլկո» ՍՊԸ ղեկավարության հայտարարությունը

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

I. Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,

գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիմունքով վրա պատրաստելու համար,

II. Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման վերաբերյալ,

III. Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ողջույթամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Հավաստիացնում ենք, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Գործադիր տնօրեն
Իրինա Բելիշեվա

15 Հոկտեմբեր 2026



Ֆինանսական տնօրեն
Քրիստինա Քարամյան